

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 7645 ՁԵՌԱԳՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Է. Մ. ԿՈՐԵՄԱԶՅԱՆ

Մատենադարանում պահվող ձեռագրերի շարքում կա մի ավետարան¹, որի ստեղծման ո՛չ տեղը, ո՛չ ժամանակը հայտնի չեն։ Ձեռագրի վերջից պակասում են թերթեր, ընդ որում նաև բուն հիշատակարանը։ Մատենադարանի ձեռագրացուցակի կազմողները, ելնելով ձեռագրի տառաձևերից, թվագրում են այն XIV դարով։ Այդ է վկայում նաև պահպանված մանրանկարների ոճը։

Ձեռագրի 10բ էջում (նկ. 1), Մատթեոս ավետարանիչի պատկերի տակ պահպանվել է մի հիշատակագրություն, որից տեղեկանում ենք, որ ձեռագիրը պատվիրել է Մատթեոս քահանան և նկարազարդել են Առաքել և Հովհաննես ծաղկողները։

Ձեռագրում պահպանվել են նաև մի քանի անթվական հիշատակագրություններ, ուր նշվում է, որ ոմն պարոն Մկրտիչ «ազատեց զսա յանաւրինաց գերութենէն»²։ Ձեռագրի առաջին էջում կա նաև հետագայի, 1761 թ. հիշատակարան՝ գրված Բախչիսարայում, որտեղ և ավետարանը վերանորոգվել է, իսկ թոխաթցի տեր Հովհաննեսը հանձնել է այն «Պալըխլավայ սբ Յօհաննէս վանքին»³։

Այդ ամենից հետո ձեռագիրը տեղափոխվել է Նոր Նախիջևան և այնտեղից էլ 1920-ական թթ.՝ Երևան։

Ուշադրության ներկայացվող ավետարանը ունի չափազանց հետաքրքիր մանրանկարներ, որոնց կատարմանը, ինչպես տեսանք, մասնակցել են երկու նկարիչներ՝ Առաքել և Հովհաննես։ Հիշատակագրության մեջ, որը պահպանվել է Մատթեոս ավետարանիչի պատկերի տակ, Հովհաննեսի անունը ջնջված է և կարդացվում է դժվարությամբ։ Ջնջողը հավանաբար եղել է կամ առաջին ծաղկող Առաքելը, կամ պատվիրատու Մատթեոսը, որոնցից մեկը ինչ-ինչ պատճառներով չէր ցանկանում պահել ձեռագրում երկրորդ ծաղկողի անունը։ Ուշագրավ է, որ «ծաղկողքս» բառի մեջ ջնջված է «ք» տառը։

Էականն այստեղ, սակայն, այդ երկու վարպետների կողմից ստեղծված մանրանկարներն են, կատարված երկու տարբեր, բայց անկասկած տաղանդավոր նկարիչների ձեռքով։

Քանի որ առաջին մանրանկարի տակ գտնվող հիշատակագրության մեջ ջնջված է Հովհաննեսի անունը, կարելի է ենթադրել, որ տվյալ մանրանկարի հեղինակը եղել է Առաքելը⁴։ Ըստ այդմ, ձեռագրի մանրանկարները, որոնք ոճական ընդհանրություններ ունեն առաջին մանրանկարի հետ, պետք է վերագրվեն Առաքելին, իսկ մնացածները՝ Հովհաննեսին։

1 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7645։

2 Նշված ձեռագրի 97ա էջում։

3 Նույն տեղում, էջ 1ա։

4 Այս ենթադրությունը խիստ պայմանական է, քանի որ չեն պահպանվել հարցը պարզաբանող ուրիշ հիշատակագրություններ։

Ուստի Առաքելի ձեռքով են կատարված ավետարանիչների կերպարները և տերունական 9 մանրանկարներ⁵։ Հիշենք այստեղ հետևյալ հանգամանքը. հայերը Ղրիմ էին գաղթել Հայաստանի տարբեր վայրերից, ինչպես նաև Կիլիկիայից։ Ի դեպ, XIII դարում բարձր վերելքի հասած կիլիկյան արվեստը իր ազդեցության ուժով մեջ է ընդգրկել ոչ միայն Ղրիմի, այլև հայ գրչության շատ կենտրոններ, զգալի չափով որոշելով նրանց արվեստի հետագա զարգացումը։ Ինչ վերաբերում է բուն Հայաստանից եկող հոսանքներին, նրանք կապվում են հիմնականում հաղտյաց գավառի⁶, Կարինի մանրանկարչական ավանդների հետ, որոնք թափանցեցին Ղրիմ այնտեղից գաղթած հայության հետ⁷։

Մեր ձեռագրի ավետարանիչների կերպարները կրկնում են հիմնականում այն օրինակները, որոնց հաճախ հանդիպում ենք հաղտյաց գավառի XIII—XIV դարերում նկարազարդված ձեռագրերում։ Ավետարանիչները պատկերված են դիմացից, միայն դեմքերն են երեք քառորդով շրջված դեպի աջ։ Նրանց դիրքը, հագուստի ծալքերի մշակման, ճարտարապետական ֆոնի, նստարանի և նույնիսկ գույների նմանությունը մատնանշում են, որ թե՛ հաղտյաց գավառի, թե՛ մեր ձեռագրի վարպետների ելակետն ընդհանուր էր։

Այս ընդհանրությունները գուցե առիթ տալին մտածելու, որ Մատենադարանի № 7645 ավետարանը ևս գրված է հաղտյաց գավառում։ Սակայն կան տվյալներ, որոնք թույլ են տալիս ենթադրելու, թե սույն ձեռագիրը կարող էր գրված լինել Ղրիմում, քանի որ տվյալ ավետարանի մանրանկարները ավելի շատ աղերսվում են հենց Ղրիմում ստեղծված մատյանների, մասնավորապես 1342 թ. նկարազարդված ձեռագրերի մանրանկարների հետ⁸։

Ձեռագրի 50-րդ էջում կա մի ուշագրավ նշում. դա Մատթեոսի ավետարանի 14-րդ գլխի 24-րդ տունն է, որտեղ կարդում ենք. «Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն»⁹։ «Նաւն» բառից հետո գրիչը հատուկ նշան է դրել։ Նման նշաններ դրվում էին սովորաբար ուղղում կամ ճշտում անելու դեպքում և հենց նույն էջի լուսանցքում էլ գրվում էր նրա բացատրությունը։ Նշված էջի լուսանցքում կա բացատրություն՝ գրված ոչ հայերեն տառերով, այլ ռուսերեն HOH կամ լատիներեն HOH: Առաջինի դեպքում կունենանք «նաւն» բառի ընթերցման բացատրություն HOH, կապված թերևս տվյալ միջավայրում գույություն ունեցող բարբառի հետ։ Եթե փորձենք լատիներեն կարդալ, հնարավոր կլինի այստեղ HOHANNES բառի կրճատված ձևը տեսնել, քանի որ համաբարբառի տվյալներով Մատթեոսի ավետարանի նշված հատվածը համապատասխանում է Հովհաննի ավետարանի 6-րդ գլխի 17-րդ տան բովանդակությանը։

5 Մնունդ, Տեառն ընդ առաջ, Մկրտություն, Քրիստոսը աշակերտների հետ, Մուտք Երուսաղեմ, Այլակերպություն, Խորհրդավոր ընթերթ, Դժոխքի ավերումը, Զաքարիայի ավերումը։

6 հաղտյաց գավառը գտնվում էր Բարձր Հայքի հյուսիս-արևմուտքում։

7 Տե՛ս է. Կ ո Ր խ մ ա ղ յ ա ն, 14—15-րդ դարերի Ղրիմի հայ մանրանկարչական արվեստի որոշ առանձնահատկություններ, ռեանրեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 201—211։

8 Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 849։

9 Հ. Ո ս կ յ ա ն, Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, 1963, էջ 431։



Նկ. 1. Մատթեոս ավետարանիչ, ծաղկող
Առաքել, ձեռ. № 7645



Նկ. 2. Մկրտություն, ծաղկող
Առաքել, ձեռ. № 7645



Նկ. 3. Մկրտություն, Ղրիմ, ծաղկող՝ Ավետիս,
ձեռ. Վիեննայի, № 849



Նկ. 4. Այլադրություն, ծաղկող
Առաքել, ձեռ. № 7645

Ավելի հավանական է թվում, սակայն, առաջին ենթադրությունը, քանի որ համաբարբառը արտացոլված է ձևավորի ներքևի լուսանցքներում հայերեն տառերով: Բացի այդ, լատիներեն կրիներ Իոհաննես և տշ թե Հոհաննես:



Նկ. 5. Համբարձում, ծաղկող՝ Հովհաննես, Նկ. 6. Թովմայի թերհավատությունը, ծաղկող՝
ձեռ. № 7645 Հովհաննես, ձեռ. № 9202

Բոլոր դեպքերում, թե՛ ռուսական, թե՛ լատինական տառերի գոյությունը հայերեն ձեռագրի էջում հնարավոր էր միայն այնպիսի միջավայրում, որտեղ հայերը շփման մեջ են եղել այլ ժողովուրդների հետ: Շատ հավանական է, որ այդ միջավայրը Ղրիմը լիներ:

Տվյալ փաստը, իհարկե, բավական չէ, որովհետև այդ նշումը կարող էր թափանցել նաև նախօրինակից: Բայց այն լրացվում է այլ փաստերով:

Ինչպես տեսանք, ձեռագրում պահպանվել է հետագա ստացողի հիշատակարանը, որը գրված է Ղրիմում XVIII դարում:

Առավել շատ նյութ են տալիս ձեռագրի մանրանկարները:

Ինչպես նշեցինք, դրանք կատարված են երկու վարպետների կողմից՝ Առաքելի և Հովհաննեսի: Առաքել ծաղկողի ավետարանիչներից մեկի հետ արդեն ծանոթացանք և նշեցինք, որ այն վերարտադրում է խաղտյաց գավառում տարածված օրինակները: Սակայն տերունական նկարները իրենց պատկերագրական սխեմաներով կապվում են ղրիմահայ արվեստի հետ: Կրկնելով գրեթե նույնությամբ XIV դարում Սուրխաթում գրված ավետարանի մանրանկարների հորինվածքները¹⁰, Առաքելը վերարտադրում է դրանք յուրովի: Ուշագրավ են

¹⁰ Վիեննայի № 849 ձեռագրի մանրանկարները:

Առաքելի ստեղծած կերպարների դեմքերը՝ նուրբ և գեղեցիկ: Հմայիչ են հատկապես աչքերը, որպես մաքուր և պարզ հույու արտացոլում, մանուկների աչքերի նման: Ղրիմի ձեռագրի մանրանկարների հետ համեմատելիս, ծաղկող Առաքելի պատկերած կերպարները առանձնանում են իրենց յուրօրինակությամբ: Իմաստավորվելով աշխարհիկ կյանքից հրաժարվելու՝ գերզգայական աշխարհին մոտենալու գաղափարով, նրանք կարծես ապրում են ոչ երկրային կյանքով:

Առաքելը նկարում է պարզ և մաքուր գույներով, ճաշակով համադրելով դրանք իրար: Մեծ դեր է խաղում գիծը՝ մերթ ուժեղ, մերթ մեղմ, պլաստիկ և ճկուն, որը տեղին ընդգծում է հիմնականը, կարևորը, իսկ երբեմն էլ բոլորովին անհետանում:

Նուրբ և մանրակրկիտ մշակման են ենթարկված մազերը, որոնք դասավորված են գեղեցիկ սանրվածքով: Նուրբ են Առաքելի կերպարների ձեռքերը, պլաստիկ են նրանց շարժումները: Ուշագրավ է ծալքերի գծային ութմիկ մշակման եղանակը:

Ինչպես նշեցինք, ձեռագրի մանրանկարները իրենց պատկերագրությամբ աղերսվում են Ղրիմում 1342 թ. գրված և զարդարված ավետարանի մանրանկարների հետ: Մկրտություն պատկերող մանրանկարը (նկ. 2) ներկայացնում է բյուզանդական պատկերագրության մի տարբերակ, շատ տարածված նաև կիլիկյան արվեստում: Հորինվածքը սիմետրիկ է: Կենտրոնում պատկերված է Քրիստոսը, ձախ կողմից՝ Հովհաննես Մկրտիչը, որը ձեռքերը պարզած կռացել է դեպի Հիսուսը: Վերջինի հագին, ինչպես հաճախ տեսնում ենք XIII—XIV դարերի հայկական մանրանկարներում, քուրձն է: Մկրտիչի դեմքը պատկերված է կողքից: Աջ կողմից մոտենում են երկու հրեշտակներ: Գետի մեջ երևում են միայն ձկներ. չկան ո՛չ վիշապը, ո՛չ Հորդանան գետի մարմնավորումը: Ղրիմի ձեռագրում այս տեսարանը նույն հորինվածքն ունի, փոքր շեղումով՝ Մկրտիչի դեմքը երեք քառորդով շրջված է դեպի աջ (նկ. 3):

Այլապատկերություն տեսարանը նույնպես ներկայացնում է կիլիկյան մանրանկարներում տարածված մի տարբերակ, սակայն Առաքելի մոտ այն ինքնատիպ երանգավորում է ստացել: Թողնելով խորքը մաքուր, ծաղկողը հասնում է առանձնակի պարզության և թեթևության: Գեղեցիկ, պայծառ դեմքերը շատ արտահայտիչ են (նկ. 4):

Մուտք Երուսաղեմ մանրանկարը նույնպես կատարված է մաքուր, չներկված ֆոնի վրա, մի հանգամանք, որը հիշեցնում է Ղրիմի 1332 թ. հանրահայտ ավետարանի մանրանկարները¹¹: Հետաքրքիր է, որ ծաղկողը լուսապսակները ներկում է տարբեր գույներով, մանրանկարի գունաշարին հաղորդելով որոշ աշխուժություն:

Հովհաննեսի մանրանկարներից ձեռագրի վերջում պահպանվել են միայն երկուսը՝ «Համբարձում» և «Ուտնալվա»: Ինչպես արդեն նշեցինք, ավետարանը վերջից պակաս է: Մեզ հաջողվեց գտնել կորած թերթերը, որոնք որպես առանձին ձեռագիր գտնվում են Մաշտոցի անվ. Մատենադարանում 9202 համարի տակ: № 7645 ձեռագիրը վերջանում է Հովհաննու ավետարանի 13-րդ գլխով, իսկ № 9202 ձեռագիրը սկսվում է հենց այդ գլխից և շարունակվում մինչև վերջ: Նույնն են թերթերի չափերը (22,8 × 15,8), թղթի գույնը, տողերի քանակը (20).

11 Լ. Ա. Գ ու ռ յ ո վ ո, Հայկական մանրանկարչություն, Երևան, 1967, էջ 222, նկ. 64:

բոլորագրով գրված տառերի ձևը, թանաքի գույնը, լուսանցքների և տողերի հեռավորության չափերը: Լինելով № 7645 ձեռագրի մասը, այս հատվածը ևս ունի թվով երեք մանրանկարներ, կատարված Հովհաննեսի ձեռքով¹²:

Հովհաննես ծաղկողի կատարման եղանակը որոշակի տարբերվում է նստադիր: Հովհաննեսը աշխատում է ավելի գեղանկարային ոճով: Եթե Առաքելի մոտ որոշակի գեր էր խաղում գիծը, ապա Հովհաննեսի մոտ առաջնակարգ գեր է ստանում գույնը (նկ. 5, Համբարձում, նկ. 6, Թովմայի թերհավատությունը): Գունային մեղմ անցումների միջոցով նկարիչը հասնում է կերպարների ծավալային լուծման:

Դժբախտաբար, Հովհաննեսի մանրանկարները ավելի վատ են պահպանվել: Դա հիմնականում բացատրվում է նրանց ձեռագրի վերջում տեղադրված լինելու պատճառով: Իսկ ձեռագրի վերջին թերթերը մաշված են, տեղ-տեղ նույնիսկ պատռված: Հովհաննեսը, ըստ երևույթին, աշխատել է Առաքելի հետ միաժամանակ և օգտվել նույն օրինակից: Այդ մասին է վկայում նրա մանրանկարների պատկերագրությունը, որը աղբյուրում է Ղրիմի ավետարանի պատկերագրական սխեմաներին, որի մանրանկարների հետ համեմատում էինք նաև Առաքելի վրձին պատկանող տեսարանները:

Հետաքրքիր է պատկերված «Ոտնալվա» տեսարանը: Ինչպես և Ղրիմի նշված ձեռագրի նույն տեսարանում, այստեղ ևս գործողությունը կատարվում է կարծես նույն շենքի երկու հարկերում: Վերևում առաքյալները հանում են իրենց ոտնամանները, իսկ ներքևում կատարվում է գլխավոր գործողությունը:

Այսպիսով՝ Մատենադարանի № 7645 ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս այն համարել XIV դարի վերջի գործ, կատարված, հավանաբար, Ղրիմում:

Պարզ տարբերվում են երկու ծաղկողների՝ Առաքելի և Հովհաննեսի մանրանկարները:

Մատենադարանի № 9202 ձեռագիրը կարելի է համարել № 7645 ավետարանի մաս և միացնել վերջինիս:

АВТОРЫ МИНИАТЮР РУКОПИСИ МАТЕНАДАРАНА № 7645

Э. М. КОРХМАЗЯН

(Резюме)

Среди хранящихся в Матенадаране рукописей имеется евангелие (№7645), место и время создания которого неизвестны. Ориентировочно его относят к XIV—XV вв. Утеряны последние листы рукописи, а вместе с ними и памятная запись. Автору удалось обнаружить недостающую часть рукописи, которая в виде фрагментарного манускрипта хранится в Матенадаране под № 9202. Стиль украшающих рукопись миниатюр позволяет предположить, что возможным местом ее создания мог быть один из центров письменности в армянской колонии в Крыму. Миниатюры рукописи исполнены художниками Аракелом и Ованесом.

¹² Խաչելություն, Թովմայի թերհավատությունը և սր. հոգու դալուստը: